բուած «Մառախուղը» իսկական բանաստեղծութիւններ են, համամարդկային նշանակութիւն ունեցող։ «Ինչո՞ւ»-ն իրականութեան ճիշտ դրոշմն է կրում։ «Մինչև մահ և յետոյ» բանաստեղծուհու անձնական տենչանքներն են արտայայտում։ «Մանուշակը» կանացի քնքոյշ հոգու թեթև հառաչանք է։

Մեր ազգային վէրքերը խուփոտութեան հասնող բարձր ձայնով երգողները կարող էին շատ բան սովորել Ադա Նեգրի-ից։ Գուցէ ճշմարիտ բանաստեղծուհին նրանց ներշնչէր փոքր ինչ չափաւորութեան զգացում, առանց որի չի եղել և չի կարող լինել իսկական գեղարուեստ։

Թարգմանիչը յաջողել է դժուար գործը գովելի ձիրքով։ Նրա բանաստեղծական աւիւնը շատ տողերում են զգացւում։ Առհասարակ, պ. Ցակովբեանը իրրև բանաստեղծութիւններ վերարտադրող պէտք է պատուաւոր տեղ բռնի մեր դրականութեան մէջ։ Նրա ոճը բռնազբօսիկ չէ, գունաւոր է, ճիշտ է թէև տեղ տեղ նկատւում է յարմար բառերի ընտրութեան ջանք, բայց ոչ այնչափ, որ վնասի թարգմանութեան սահունութեանը։

Գրքոյկը բաղկացած է 62 փոքրադիր էջերից և արժէ 30 կոպ։ Թանգ է, բայց տպագրութիւնը շատ մաքուր է և թուղթը չքեղ։

Ե.

Ստացուած գրքեր

Գ. Մաղաքեան. Բժշկականութիւն և հասարակութիւն. Թիֆլիզ 1904.

Մակար եպս. Բարխուտարեանց. Աստուածային հրահանգ հանրապարտուց. Թիֆլիզ 1904.

Վ. Փափազեան. Խելօք աքաղաղներ և դրախտը, Թիֆլիս 1904.

Գ. Ֆ. Պետրով. Բարի սերմեր. թարգմ. Մամբրէ Վ. Վաղարշապատ 1904.

Միխ. Իւշկեվիչ, Տեսակցութիւն, թարգմ. Ա. Գրիգորեան. Թիֆլիս 1904.

Դէորգ Ղասապեանց. Գալուստի և Շուշանիկի պսակուելը. Ա-լէքսանդրապոլ 1904.

Հայ ժողովրդական երգեր. ժողովեց, ձայնագրեց, ներդաշնակեց Գր. Միրզայեան. Հրատ. բժ. Ա. Բուդուղեանի. Ս. Պ. Բ. 1904.

Արցունքներ. բանաստ. Աւ. Իսահակեանի. երաժշտ. Գր. Միրզայեանի. Ս. Պ. Բ. 1904.

Զեռնարկ ծաղկահատութեան. բ. տպ. Եղնիկ ք. Ալխազեանի. Թիֆլիս 1904.

Պատմագիրք Հայոց. Ա. Հ. դ. գիրք. Ղազար Փարպեցի, աշխ. Գ. Տէր Մկրտչեան և Ստ. Մալխասեան. Տփխիս 1904.

Կ. Կաուցկի. Կոլոնիական քաղաքականութիւնը անցեալում և ներկայում. թարգմ. Ռ. Խանազատ. Թաւրիզ 1904.

M. Karakosian. Ceistiges Leben im Kaukasus. Berlin (արտատպած «Deutschland Monatschrift für die gesamte Kultur» ամսաթերթից։

Արծաթ մանէթի պատմութիւնը. Տօպէլիուսի. թարգմ. Գր Շահրուդաղեանց. Թիֆլիս 1904

Մտաւոր, ֆիզ. և բար. ինքնակրթութիւն. Զօն Ստ. Բլէկկի. թարգմ. Գր. Շահբ. բ. տպ. Թիֆլիս 1904.

Պլը. Պուղի. Իմաստասէր և առակախօս Հայոց. բ. տպ. գրեց Մակար եպիսկոպոս Բարխ. 1904. Վաղարշապատ.

Շեքսպիր. Ձմեռային հեքեաթ. թարգ. Ցար. Նահապետեանց, Թիֆլիս 1904.

Բժ. Ա. Բուդուղեան. Ռուղոլֆ Վիրխով. հրատ. Յովհ. Արամեանցի. Ս. Պ. Բ. 1904.

Ադա Նեգրի. Բանաստեղծութիւններ II պրակ. թարգ. Ց. Ցակոբեան, Թիֆլիս 1904.

Արաբի. Սրբազան ժամեր. տետր առաջին. Թիֆլիս. 1904.

Մեր էժանագին գրադարանը. Արդար ծերունին. հրատ. տ. Զաբելի. Ս. Պ Բ. 1904.

Գօգոլ. Ամուսնութիւն. աղատ թարգ. Պ. Պռօշեանց, Թիֆլիս 1904 թ.

Պտղատու ծառերի բուծարան և այգիք. Գ. և Մ. Փրիդոնեանցների, Սկրա կայարանի մօտ. Թիֆլիս 1904.

«Լումայի» խմբագրութեան մէջ ՆՈՐ լոյս տեսած գրքեր.—

«ԴԻՒԱՆ ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» գիրք. Զ. Դաւիթ կաթողիկոս մ. I. դ. 4 ռ.

ԱԶԷՐՖԷԶԱ. վէպ Վ. Փափազեանի, գ. 60 կ.

ԽՈՐԷՆ ԱՐՔ. ԳԱԼՖԱՑԵԱՆ ԵՒ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԱՂՑՄԻՔԸ, Ն. Շահազիզի. Գ. 60 կ.

ՀԱՄՈՎ-ՀՈՏՈՎ Գ. եպս. Սրուանձտեանի. գ. 1 ռ. 25 կ.